

Արտասահմանի բազմահազար հայ նոր սերունդը հայերէն ընթերցանութեան միւր քիչ ունի — լաւ կազմած, խմած արտաքինով, պատկերազարդ: Եղած մանկական հանդէսները, ընդհանուր առմամբ, տեղական բնոյթ ունին: Թիֆլիսի «Հասկեր»-ի պէս մի կենդանի եւ ընդհանրական գործ պէտք է ստեղծել, որ, անտարակոյս, հեշտ չէ, բայց հնարաւոր է:

Վերջապէս, կարիք կայ եւ մի մանկավարժական — դպրոցական — կրթական հանդէսի: Պատկառելի բռնով դպրոցներ ունինք արտասահմանում, խոշոր քանակութեամբ ուսուցիչներ եւ կրթական գործով հետաքրքրուող մարդիկ:

ԴՈՒՅՏ. Ա. ԱՔԵՂԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՔՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Բերլինի Zeitschrift für Politik (Քաղաքականական Հանդէս) ամսագիրը, որ Գերմանիոյ ինն եւ քաղաքականական առաջնակարգ հրատարակութիւններից մէկն է, գետեղել է Դոստ. Արտաշէս Աքեղեանի մի ընդարձակ տեսութիւնը. «Քրդական խնդիրը» վերնագրով: Գրածքը արտասովոր է եւ առանձին, սահմանափակ օրինակներով:

Հետեւեալ հատածներն է բաժանած աշխատութիւնը. — Քիւրդիստան՝ աշխարհագրական տեսակէտից: Բնակչութիւն: Քիւրդերի ցեղային ծագումը, լեզուն, բարբառները եւ ժողովրդական բանասիրութիւնը: Պատմական անցեալը: Քիւրդերի կրօնը, ընկերային բաժանումները եւ տնտեսական զարգացումները: Քիւրդ ցեղերը: — Քիւրդերի ազատագրական շարժումները սկզբից մինչեւ րական շարժումները — քաղաքական ծրագիրը՝ Տանկատանի սահմաններում: Քիւրդերը իրաւունք եւ Պարսկաստանում: Անգլիայի եւ Ռուսաստանի քաղաքականութիւնը քիւրդերի եւ Քիւրդիստանի վերաբերմամբ:

մի լաւ խմբագրուող, լուրջ հանդէս կարող էր մեծ ծառայութիւն մատուցանել մեր կրթական գործին ու գործիչներին: Սպասելի էր, որ այս քերին լրացնէր Համագայինը իր ձեւաբանով, բայց, երեւի, միւրթական դժարութիւնները արգելք են եղել նրան ցարդ այդպիսի մի ձեռնարկի իրականացման: Կարող էր եւ պարտական էր Բարեգործականը անցնել նման գործի — գլուխ, բայց այս իմնարկութիւնը, ըստ երեւոյթի, աւելի սուր եւ անյետաձգելի մտահոգութիւններ ունի, քան կրթական — մշակութային գործը — կուսակցութիւն խաղալ եւ գաղութական կեանքի քայքայման ծառայել:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Վիեննայի Միջազգային ֆոլ մամուլի տակ է եւ այս ամէն լոյս կը տեսնէ Դոստ. Ա. Աքեղեանի՝ գերման լեզուով կազմած «Արդի Հայերէնի Քերականութիւն» ձեռնարկը, համառօտ ընթերցարանով միասին: Աշխատութիւնը կազմելու է մի հատորը Բերլինի համալսարանին կից արեւելեան լեզուների քերականութեան հրատարակութեամբ լոյս տեսնող դասագրքերի շարքի: Զուգահեռաբար տրուում են արեւելահայ եւ արեւմտահայ գրական բարբառների քերականական կանոնները: Առաջին փորձ է կատարուում այսպիսով՝ կազմելու արդի հայերէնի երկու միւղերի քերականութիւնը իբրեւ մի ամբողջութիւն եւ մէկ հատորի մէջ: Դասագիրքը սահմանւած է գլխաւորապէս ձեւաբանութեան հայերէնի դասընթացին հետեւող գերման ուսանողների գործածութեան համար: Ինչպէս յայտնի է, 1926 թ. ամառային կիսամեակից սկսած՝ Պրուսիոյ կրթական միջազգային հրամանագրով Արեւելեան լեզուի ձեւաբանութեան, ի քիւս արեւելեան ուրիշ լեզուների,

աւանդում է նաեւ աշխարհաբար հայերէնը, իր երկու հիւղերով: Դր. Արեղեանը հայերէնի դասախօսն է այդ ձեւաբանում:

ՊՐՈԻՍԻՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ ԼՐԱՑՈՒՅԻՉ ՅՈՒՑԱԿ.— Պրոֆ. պետական մատենադարանի արեւելեան բաժնի տնօրէնութեան առաջարկով՝ Դր. Ա. Արեղեան կազմել է նոյն մատենադարանի հայերէն

ընդհանուր գրքերի լրացուցիչ ցուցակը, որպէս ամբողջացում հանգուցեալ Նիկ. Բարսեղեանի կազմած եւ 1888 թ.—ին առանձին հատորով տպագրւած «Ձեռագրաց Ցուցակի: Լրացուցիչ «ցուցակը» կազմած է գերմաներէն լեզուով եւ պարունակում է յիշեալ քուսակնից յետոյ մատենադարանի կողմից ձեռք բերած հայերէն ձեռագիրների նկարագրութիւնը:

ՊՐՈԳ. Յ. ՄԱՆԱԴԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Երեսնում, Միլոնեան փոնդի հրատարակութեամբ լոյս է տեսել պրոֆ. Յակ. Մանանդեանի «*Ֆեոդալիզմը Հին Հայաստանում*» հատորը: «Գր. Թերթ»-ը (№ 28) հետեւեալ տեղեկութիւններն է տալիս այդ աշխատութեան մասին: «Ուսումնասիրութեան ենթարկելով Հայաստանի հնագոյն պատմիչների բազմաթիւ բնագիր-աղբիւրները, օգտագործելով նիւրիւն վերաբերող գրականութիւնը, ելնելով փաստերի եւ պատմական երեւոյթներ լուրջ վերլուծութիւնից. Մանանդեանը յանգել է Հայաստանի փեոդալիզմին եւ նրա առանձնաշխարհիւններին վերաբերող հետաքրքարաւոր եզրակացութիւնների:

Բացի ներածութիւնից եւ աղբիւրներին վերաբերող ընդհանուր տեսութիւնից ու գրականութեան աղբիւրների գանկից, հեղինակը տալիս է փեոդալիզմի, նախարարութիւնների ներքին էութեան, նրանց փոխարարներութիւնների եւ սոցիալական զանազան խաւերի դրութեան նկարագիրը: Առանձնապէս հետաքրքրական է հայ եկեղեցու դասակարգային դէմքի բնորոշման եւ նրա կատարած դերի վերլուծութեանը նւիրած գլուխը, ինչպէս նաեւ «շինականների» եւ «տափկների», հայ արհեստագործութեան եւ գիւղացիութեան նւիրած մասերը: Բազմաթիւ այլ խնդիրներ շօշափելուց բացի, Մանանդեանը յատուկ բնութեան առարկայ է դարձրել հայ-

կական փեոդալիզմի անկման պատճառների խնդիրը: Գրքում շօշափւած խնդիրների լրջութիւնը եւ նրանց համագումարը՝ հեղինակի կատարած բոլոր եզրակացութիւններով, բոլոր տալիս տեսլու որ Հայաստանի գիտական պատմագրութեան մէջ այս աշխատութիւնը կունենայ իր խոշոր նշանակութիւնը:

Միաժամանակ, Պետերբուրգի կողմից լոյս է բնծայւել պրոֆ. Յ. Մանանդեանի երկրորդ ուղագրաւ գործը՝ «*Խորհրդաւոր տեղեւոր լուծումը*», որ, ըստ նոյն «Գր. Թերթ»-ի «բաղկացած է հետեւեալ մասերից՝ «Աշխարհացոյցը» եւ Մովսէս Խորենացին, Խորենացու առեղծածի լուծումը, յաւելւած՝ Խորենացու պատմութեան բառապաշարը եւ վերջում՝ «Ուսումնասիրութեան հիմնական քեդիւնները» ռուսերէն եւ գերմաներէն»:

«Մանանդեանի տեսութեամբ Խորենացին իր պատմութիւնը գրել է Բագրատունիների ուժեղացման շրջանում»՝ Գրքում: Յնկելով պատմաբանասիրական համախառնութիւններից համարած եզրակացութիւնների վրա՝ Մանանդեանը նախ աշխատում է ցոյց տալ, որ «Աշխարհացոյց»-ն եւս Խորենացու ձեռքով է գրւած: Ցատուկ ուսումնասիրութեան առարկայ դարձնելով նիւրիւն վերաբերող մի շարք խնդիրներ՝ հեղինակը գրքին կցւած յաւելւածում կանգ է առնում Խորենացու պատմութեան լեզուի,